անցկացրել զօրատես (ըստ Եղիշէի՝ 66 հազ. հեծեալ ու հետեւակ) եւ նախապատրաստել տարածքը: Սահմանային Հերում կիտուող պարսիկներն ու «ուրացողները» նախ ձգտել են մեծաքանակ ուժի ցուցադրումով եւ քրիստոնէութեան թոյլատրման կեղծ (յամենայն դէպս՝ վստահելի չերաշխաւորուած) խոստումով կոտրել հայերի դիմադրելու կամքը եւ լոկ դրա տապալումից յետոյ են դասական ռազմերթի կարգով շարժուել դէպի Արտաշատ մայրաքաղաք: Իրենց դէմ ուղարկուել է Արտազի տէր Ամատունիներից Առանձար սեպուհի մոբիլ ջոկատը (2 հազ. հեծեալ), որը մեծ վնասներ է պատճառել մթերք ամբարող (ֆուրաժիր) խմբերին, ապա Պարսից բանակն իր յետեւից «բերել» վաղօրօք ընտրուած վայրը («զոր ընտրեաց յաղագս երկիւղի զաւրացն Հայոց»)՝ «ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտին»[7]:

Պարսիկներին թոյլ են տուել անցնել Աբարաբաշիի գետանցը, բայց յաջորդ գետանցի դիմաց նրանք տեսել են զինավառ Հայոց գնդերին, ում ողջ տեսքն ասում էր, որ լոկ իրենց յաղթելու դէպքում թշնամին կը շարունակի ճանապարհը՝ առաջ կամ յետ: Անշուշտ, Վարդանի խնդիրը հակառակորդին պարզապէս ռազմերթի վրայ անսպասելի դիմաւորելը չէր (Մուշկանի լաւ վարժուած զօրքը պարտաւոր էր պատրաստ լինել նաեւ նման՝ երթից անվնաս ծաւալուելու ռազմագործողութեանը), այլ նրա մտայղացումն էր՝ ոսոխին ճակատամարտ պարտադրել ա՛յն բնական դիրքերում (կոնկրետ՝ բնական արգելք գետանցների միջեւ), որտեղ Հայոց զօրքը կ'ունենար լիարժէք ծաւալուելու տարածք, իսկ առնուազն կրկնակի գերակշռող եւ փղերով ու գումակով ծանրացած այդ ոսոխը՝ ոչ: Նման կերպ պարսիկներին ստիպել են սեղմուելով տեղաւորուել 3 գետանցների յետեւում, ուր եւ նրանք սկսել են հնարաւորինս ծաւալուել («տարածանէր երկայնէր զճակատն յերկայնութիւն դաշտին մեծի»): 3 գետանցների առջեւ 3 գնդեր դասաւորած Վարդանը, տեսնելով թշնամու «տարածուելը» (այլ ոչ թէ՝ հէնց ընթացքից կենտրոնով գրոհելը), կատարել է իր մշակած ծրագրի յաջորդ քայլը. նա իր առանձնացրած չորրորդ՝ հարուածային հեծեալ գնդով («յանձն իւր առնոյր զգունդն չորրորդ»), ըստ ամենայնի՝ գաղտնի (այսինքն՝ գիշերը եւ երկու գիւղերի միջեւ գետի արեւելեան ափին իջնող բլրաշարի թիկունքով) տեղափոխուել է հայկական ձախ թեւի դիրքերը, որտեղից էլ Մայիսի 26-ի վաղ առաւօտեան («մերձեալ էր այնուհետեւ ժամ ելից արեգական») Խորէն Խորխոռունու ձախակողմեան գնդի հետ միասին Աբարաբա-

---

[7] Առանձար Ամատունու գործողութիւնների վերլուծութիւնը տե՛ս Хачатурян 1992, 129; Айвазян 2016, 212-215. Հարկ է նշել, որ վերջին մենագրութիւնը հանգամանալից պատասխան է տալիս ծագող գրեթէ բոլոր մեծ ու փոքր հարցերին եւ դրանով ուրիշ հետազօտողի համար ստեղծում ոչ մի կարեւոր իրողութիւն բաց թողած չլինելու վստահութեան մեծարժէք պատեհութիւն: